


142

L. I. 2.



ՎՍՏԱՆՈՒԹԻՒՆ "ՆՈՐ ՕՐ", Ի

ՆԱՄԱԿ ԿԱՏ ՈՐ ԵՒ Է ՔՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԵՏԵ Է ՈՒՂՂԱԿ ԱՌ

Վարչութիւն ՆՈՐ ՕՐ Լուսրի

ԳԱՀԻՐԷ

Նամակատուի Թիւ 117

DIRECTION DU JOURNAL

NOR-OR

CAIRE, B. P. N° 117

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՍԱՐԱՆ-ԲՆԹԵՐՑԱՍԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Գանիբէի համար	Տարեկան,	50
»	Վեցամսեայ	30
Շրշախայից	Տարեկան,	60
»	Վեցամսեայ	35

ԱՐՏԱՍԱՀԱՏԱՆԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Ֆրանկ	18
Վեցամսեայ	»	10

ՌՈՒՍՏՈՆ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՄԱՐ

Տարեկան	Րուբլի	7
Վեցամսեայ	»	4

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ ԿԱՆԵՒԿ Է

ԵՒ ԲՈՂՈՍԱՐԻ ՅԱՍՈՒԿ

Թերթին վարչութեանը վրայ է:

Չհաղորդուելու համար չհարձուիր:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՄՐՏԻՉ ԿԵՆՈՒՍՅ ՅԻՍՈՒՍԻ ԿՐԻՍՏՈՒԻ ԵՒ ԱՆԿՆԱՆՆԵՐԻ ԿՐԱՏՈՒՄ ԱՍՏՈՒՄ ԵՄԻՍԿՐԱՄԱՍՅԵՏ ԵՒ ԿԱՐՊՈՒԹԻՒՆ ԱՆԿՆԱՆՆԵՐԻ ՀԱՅՐՈՎ ՄԱՅՐԱԳՈՂՆ ՊԱՏԻՄԱՐԻ ԿՐԱՏԱԳՐԱԿԱՆ ՆԱԽԱՆԵԾԱՐ ԱՐՈՒՄ ԱՆԱՖԻՆԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՂ ՄՐՈՂ ԿԱՐՊՈՒԹԻՒՆ ԷՉՄԻԱՆԻ:

Մեծապատիւ Պարոնայց Գործադիր Ժողովոյ Հայ-Լուսրան Ընթերցատան Եգիպտոսի որ ՚ի Գոհիբէ և անդամաց նորին, հարազատ որդւոց Մայր Աթոռոյս ողջոյն և Հայրապետական օրհնութիւն:

Ընկալեալ մեր զգրութիւն Իււանի Գործադիր Ժողովոյ քննութեանը առեալ ՚ի և զտեմբերի անցելոյ, սուրբ եղաք ՚ի հոգի, սեռ սանկելով զհամակրելին համայնից ազգօգուտ ձեր գործ և ջան. Ապաքէն ՚ի ժամանակիս յայսմիկ յորժամ յայսնի է մեզ վիճակ հայրենեաց մերոց և ժողովրդեան, սրք ցիր և ցան սիրեալ կան ընդ սրտս սիրելեաց սկսեալ ՚ի տանէ Հնդկաց մինչ ցնոր Այսարհի անդր քան զՄեծն Ովկիանոս և ՚ի Հարաւային մեծ ծովէ մինչև զՍաուդեան հիւսիսային ծով, ցրտեալք ՚ի զանազան ազգս և յեզուս, մնայ մեզ ձեռնհասիցս թէ՛ հոգևորական դասու և թէ՛ աշխարհիկ անձնաւորութեանց սրոց զգալի է և սիրելի հոգւոյ սէր հայրենեաց և ազգի, ջանալ, կրթել և ուսուցանել զսկարն և արժարձել ՚ի ժողովրդական մեր զուսումն և զգիտութիւն Հայրենեաց, զսէր կրօնի և մայրենի լեզուի, զանցելոյն երջանկութեան փառս և զարդէ՛ գրութեան սուրբիս և զհետեանս:

Ի՞նչ եմք զի յափանց նեղութի հասանէ մեզ ձայն միտքարութեան ՚ի տարագիր որդւոց իմոց կիթ զգալի է նոցա սէր ուսման և ընթերցանութեան և հաստատեալ է իսկ Լուսրան-Ընթերցատուն՝ առիթ կրթութեան և լուսաւորութեան, պատճառ շողկալի և միութեան, յօդ սիրոյ և բարեգործութեան իւրաքանչիւրն զամենեանն ՚ի մի հաւաքելոյ Ռուսի և մեք որ սիրողս եմք ընդ յառաջագիտութիւն և լուսաւորն կրթութիւն հարազատաց Մայր Աթոռոյս, լուեալ զայդ հաստատութեանէ՛ղ՝ սուրին Հայրապետական կենդանու օրհնմք զհաստատութիւնը և զպատճառս գոյութեան գորին. Օրհնմք և զփաստակաւոր պարտաւստ, որ սքնիք և ուսուցանէք, զարթոնցանելոյ ՚ի հոգիս ունկնդրաց զէս ՚ի յառաջագիտութեան, կրթութեան և երջանկութեան ուղին. Օրհնմք զհամայն բարեբարս և սատարողս հաստատութեանը, որք ձեռնուրինն այդմ նպաստելք և քաջախերութեամբ:

Օրհնմք զհամայն ժողովուրդն Հայաստանեայց, որ կայք և բնակիք այգր, մաղթելով

Վասն ձեր յաջողութիւն, սէր և միաբանութիւն, որ միակ խարխալն է գոյութեան և պահպանութեան ձերոյ և հաստատութեան Եկեղեցւոյն Հայաստանեայց և գոյութեան ազգի և լեզուի:

Շնորհք և ողորմութիւն մարգարէր Փրկչին և հովանի Ամենասուրբ Երրորդութեան ՚ի վերայ հաւատացելոցք. Ամէն:

(Ստորագրութիւն)

Ի 20 Յունիսի 1900 ամի
և. ըստ տոմարիս ՌՅԽԹ
՚ի Հայրապետութեան մերում է՞ր ամի
յԱրարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի
ի Վարչապետ
Թիւ 60

ՈՒՂԵՐԸ ԱՌ "ՆՈՐ ՕՐ"

Ծագէ՛, Նոր օր, բնի նոր յոյսեր Հայութեան.
Երկինքն անոր՝ թանձր ամպի կան հինգարեան,
Երկինք՝ արիւն, մոխիր՝ Մահիս ու Տօրոս՝
Լուս կը դիտեն արեան գետերն ուխտոս:

Պանդուխտ խոց, կարօտի ա՛խ մը քաշեց,
Այրած սրտով Հայրենիք նա յիշեց.
Ու Հառաչանք եւ Յիշատակ հայրենեաց՝
Մնունդ քեզի տուին, Նոր օր լուսազգեաց

Սփռէ՛, Նոր օր, սփռէ՛ շողեր կենդանի,
Սաւորի մէջ նստողը՝ վեր թող կանգնի,
Սառոյց բեւեռը Հնդկիք ու Մեծ-Ովկիան
Թող վրկայեն. «Յղբայր ենք մենք անրօժան»:

Բացուէ՛, Նոր օր, բացուի՛ն աչքեր թող անուշ,
Գալիհար, խոյս տուր արիւնտ՝ ապաւոյս.
Ազատ շունչի, լոյսի՛ կարօտ ենք, լոյսի՛,
Պիտի լոյսով բացուին դաները լոյսի:

ՊԱՆԴՈՒՆՏԸ

Լուսրան-Ընթերցատան Գործ. Ժողովոյ ՚ի Լանին կողմէն՝ թերթիս վարչութեանը զրկուած է հետեւեալն ՚ի հրատարակութիւն:

ՆՈՐ ՕՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՆՈՐ ՕՐԸ Գահիրէի հայ Լուսրան-Ընթերցատուն ընկերութեան բերանն ու սեպականութիւնը, ազգային, բանասիրական ու քաղաքական կիսաշարժաթերթ մ'է, և կը հրատարակուի շաբաթն ևրկու անգամ, ամեն չորեքշաբթի ու շաբաթ օրերը կէս օրէ ետք: Կ'ընդունի ծանուցումներ ազգեր, հաշուեկիշիւներ, յայտարարութիւններ, կանխիկ վճարումով ու չափաւոր գիներով, բարենպաստակ ընկերութեանց ու ազգօգուտ հաստատութեանց կամ ձեռնարկութեանց համար 50 Օ/Օ բացառիկ զեղչով մը:

Ն Պ Ա Տ Ա Կ Ը

ՆՈՐ ՕՐԻ նպատակն է պաշտպանել ազգային շահերն ու իրաւունքները, ձողկել հանրային թերութիւն:

ներք, ջանալ ջնջելու արմատ բռնած մոլութիւնները, վատ ունակութիւնները, ազնուացնել ցեղին բարքերը, հաշտեցնել, և եթէ կարելի է, ձուլել քաղաքացիներն ու բաժանումները. բարձրացնել ազգայնութեան մտաւորականն ու բարոյականը. լեցնել խուլ, անձան և անշահ հակառակութիւնները. լեցնել, բարձր ու ազգու, ժողովրդին ձայնն ու արդար պահանջումները. մէկ խօսքով, վատ ու կենդանի պահել կրօնը, լեզուն, պատմութիւնն ու գրականութիւնը, ցեղի մը քաղաքակրթութեան տարեր ը:

ՈՒՂԵՐԻ ԹԻՒՆԸ

ՆՈՐ ՕՐԸ չ'պատկանելով որեւէ կուսակցութեան, միակ ժողովրդական թերթն է. ստանց յեղափոխական ըլլալով, միշտ ազատական է. բայց երբէ՛ր պահպանուողական. ՚ի հարկին՝ պաշտպանողական կամ յարձակողական՝ հանգէս փուտ ու կեղծ, պատիւ ու վասնդատութիւնը պատկանող կամ մոլեռանգութեանը. որք այսօր հրապարակը կ'ողողին: Անիտիս և յարատեւ ուղղութեամբ պիտի քննադատէ, միշտ անաչափօրէն, և ԶԻԱՅԻՆ շարժումներն առհասարակ, սեղական թէ արտասանմանի. խնամով պիտի հետևի հայկական կեանքի ձգտումներուն ու ժողովրդային շարժումներուն. լուրերը պիտի հրատարակէ ո՛չ ՚ի լրոյ, այլ յետ ստուգելու. ներքին ու արտաքին թղթակցութիւններ ունենալով՝ պիտի ծանօթացնէ ընթերցողները, նգիպատի, Արասասանմանի և մանուսնդ, Մայր-Հայրենեաց մէջ անցած դարձած զէպերուն:

Քաղաքական լնդիրներուն ու լուրերուն լայն բաժին մը կը յատկացնէ, ամփոփ ու հոծ պարունակութեամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆԸ պիտի գրաւէ թերթօնը. ազատագրուած ազգերու կեանքն քաղաքացիական վերջին շարժերէն իրական պատկերներ. եգիպտոսայ-հնաւ խօսականն ու նոր եգիպտոսայ գաղթականութեան պատմականը. եգիպտոսայական շահեկան տեղեկագրութիւններ, եւրոպացի եգիպտոսայներուն երկերէն թարգմանուած: Վերջապէս, գրական ու գիտական նորութիւններու գրոշմը կրող, ինչպէս նաև ազգային ու քաղաքական թարմութիւնն ու այժմութիւնն բուրոյ յօդուածներ միայն պիտի հրատարակէ «Նոր Օր»ը. յօդուածներ՝ վեր, շատ վեր՝ անհասի գծաւորութիւններէ. կուսակցամոլի ջղուտութիւններէ զերծ, գրախօսի ազատութիւններ սուրբ, հանրային շահերուն հետ հաշտ:

«Նոր Օր»ը կը մարտէ վարչաքանութիւնները, կուսաօրէն յարձակումները՝ ո եւ ընկերութեան, իշխանութեան, հաստատութեան, կամ նոյն իսկ անհատի մը զէմ. կը մերթէ՛ նաև յօդուածները, որք զուրկ են գրական ունեւ արժանիքէ, կամ կը հետուն յերակամութեան տարրական կանոններուն զմ:

ԹԵ ԻՆՉՈՒ ԱՅՍ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Անպէտ հաստատութիւնները վնասակար են. վնասակարը՝ գոյութեան իրաւունք չունի. անա՛ ճշմարտութիւն մը, բացարձակ ու անժխտիկ, որուն յենլով՝ կը ձեռնարկուի սոյն հրատարակութեան. բայց ինչո՞ւ այս հրատարակութիւնը, պիտի հարցուի. միթէ՛ չկա՞ն բաւականապի

թուով թերթեր, որ կրնան լիովին գոհացնել ընթերցասէր ժողովրդին պահանջումները :

Այժմ կան, բայց ինչո՞ւ համար միևնույն հարցումը չենք ընկեր, երբ, օրինակի համար, Եգիպտոսի մէջ, հիմնուի նոր վաճառատուն մը, ծխախոտի, կերպասի. նոր հիւրանոց մը, նոր ճաշարան մը, նոր սրճարան մը, նոր գինեւոտն մը, նոր փուռ մը և այլն . . . Մնուողը մարդուն անհրաժեշտ է, հետևաբար փուռ, ճաշարան, նպարավաճառատուն կարևոր հաստատութիւններ են. մարդիկ պէտք ունին հագուստի, հետեւապէս դերձակ, հանդերձավաճառ՝ մարդկութեան կարևոր անդամները նկատուած են. երկրագործութիւն, վաճառականութիւն ու ձեռարուեստ, ահա՛ նիւթական կեանքի նախախնամութիւնը, երկրաւոր երրորդութիւնը : Կեանքի պայքարին մէջ, հացի խնդիրը կը բռնէ ուրեմն առաջին տեղը. միւս խնդիրները, դժբաղդաբար, ապրուստի հետ գործ չունենալով, երկրորդական կարևորութիւն ստացած են ընդհանրապէս այն ժողովուրդներուն մէջ, որոնք, թէև ժամանակակից, դեռ կ'ապրին քաղաքակրթութեան նախնական շրջանին մէջ. իսկ այն ազգերը, որոնք նպատակ մ'ունին, յոյսեր ու փափազներ ունին, ապագայ մը, աւելի երջանիկ ու բեղուն կեանք մը կը ծրագրեն իրենց համար, բնական է որ չեն փակուիր մնար նիւթական պէտքերու անձուկ սահմանին մէջ. ա՛նոնք, մէկ կողմէն կ'աշխատին ապահովելու իրենց կեանքի միջոցները, միւս կողմէն հսկայաքայլ կը դիմեն դէպ ի նոր հորիզոններ. մտաւորական ու բարոյական կեանքի մէջ կը փնտռեն իրենց գոհացումը :

Մեր ազգային անձնասիրութիւնը վերաւորած, մեր պատմութիւնը, քաղաքակրթութեան մէջ կատարած կարևոր գերքը, մեր պատկանողութիւնն ուրացած կ'ըլլանք, եթէ զմե՛զ դասենք յետամնաց, վայրենի կամ կէս-վայրենի ժողովուրդներու կարգը. մեր անցեալը՝ փառքերով պսակուած, ներկան փուշերով պատուած, իսկ ապագան՝ յոյսերով յղի, մենք ի՞նչպէս կրնանք ապրիլ՝ տունիկ կամ անասունի կեանքը :

Իպրոց, թատրոն ու լրագրութիւն, ահա՛ քաղաքակրթութիւնը : Հայրենիք մ'ունինք մեր ետին, ծովերէ, լեռներէ անդին. հուրի, սուրի, թալանի մատնուած հայրենիք մը, ուր մեր համարին հարազատները կը տառապին տառապանքներուն սոսկալիովը : Եւրոպա մը կայ ասդին, խուլ ու անտարբեր Եւրոպա մը, որ չահամուրթենէ ու երկրակալութենէ արբեցած՝ կը հանդուրժէ դիտել մեր անգագրում նահատակութիւնը : Հայրենիքի ցաւերն ու Եւրոպայի դաւերը պէտք է որ մերկանան. պէտք է լէ՛է, իմանայ հասարակութիւնը, եթէ գիտէ թէ ապրիլ ի՞նչ կը նշանակէ :

Եգիպտոսի մէջ ունինք գաղթականութիւն մը, որ խոտելի թիւ մը չէ, թէև չ'ըլլայ պատկառելի որքան անցեալ դարերու մէջ. այդ գաղթականութեան սպառնացող վտանգները մէկէ աւելի են : Իպրոցներ կան հոս, զուտ մարդորսութեան գիտումով հիմնարկուած. պէտք է զգացնել զայդ ու զգուշացնել մեր ժողովուրդը, չը տարուելու հոսանքէն որ զինք քիչ ատենէն կրնայ քիչ տանիլ ու անյատակ անգունդի մը մէջ թաղել ազգային կրօնքը, լեզուն բարբերը, ամբողջ պատմութիւն մը :

Չքուստաններ կան հոս, ուր հայ երիտասարդութիւնը, բացառութիւնը խիստ աննշան, գունդազունք կը դիմէ թունաւորուելու, խաղամունքներու սեղանի շուրջը սրտի տրոփումներով հալելու, մաշելու. անպատիւ տուներու մէջ սպառելու իր կեանքին թանկագին գոհարը, ցեխի

մէջ թափելու պատիւը, եթէ մնացած է. սարսափալու մինչև յետին միջոցներ, իր արդէն նիհար քսակը : Ի՞նչ թուենք երկարօրէն. հոս բաներ կան, ահաբեի և անխոտովանելի բաներ . . . :

Ազգային վարչութիւն, վարժարան, ընկերութիւններ ալ կան հոս, որոնց գործունէութեանն ու կայութեանը պէտք է որ տեղեկանայ հասարակութիւնը : Միթէ լրագրութիւնը չէ՞ որ պիտի առաջնորդէ ժողովուրդը դէպ ի բարին, օգտակարը, ճշմարիտը, գեղեցիկը. դէպ ի բոլոր ինչ որ պիտի կազմէ անոր մտաւորական ու բարոյական հարստութիւնը :

Արդ, այս նոր հրատարակութիւնն ալ, վստահ ըլլալով գտնելու հասարակութեան մէջ բաղձացուած ընդունելութիւնը, վայելելու հանրային համակրանքն ու քաջաբերանքը, կուղայ հրատարակել իր սկզբունքը, որ է արդարութիւն և ուղղամտութիւն :

Յ. ԱՅՎԱԶՈՎՍԿԻ ՄԱՅՐ

Հեռագիրները գուժեցին հաշակաւոր նկարիչ Յովհ. Այվազովսկիի անկարծելի մահը, հանրային վիշտ առթելով :

Յառաջիկայ թուով պիտի հրատարակենք ողբացեալ մեծ հայուն կենսագրական ինչ ինչ գիծերը :

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հրատարակութիւնք — պարբերական կամ ո՛չ — ազգի մը յառաջդիմութեան իբրև աստիճանաշար կը նկատուին ընդհանրութեան կողմէն : Երբ գրողն մը կ'ուզէ ո՛րեք սուր մը գրնահատել մտաւորապէս, նիւթապէս ու բարոյապէս, կը ճգնի գտնալ անոր մամբայ արտագրութեանց քանակը. եթէ այդ հրատարակութեանց թիւը հասնի պատկառելի մի գումարի, հարկ չ'կայ ուրիշ ապացոյցներ փնտռելու, հաստատու համար թէ՛ այն ազգը քաղաքակրթութեան յառաջդիմութեան և բարոյականի այս ինչ աստիճանը հասած է. այնպէս որ երկրիս վրայ ամենէն աւելի թուղթ վատնող ազգը՝ ծանօթ յառաջդիմութեան գաղաթնակէտը հասած, և ամենէն նուազ վատնողն ալ տակաւին վարը — զրոյէն վար — խաւարի, վայրենութեան մէջ մընացած կ'ենթագրուի :

Եղաւ մի ժամանակ, ուր ճշմարտանման կըրնար ըլլալ այս երկրագրութիւնը, բայց այս վերջին օրերս, անթխելի եղելութեանց, իրականութեան առջև յամառիլ, այսպիսի գաղափարի մը վրայ, պարզապէս մեղանշել է բառերու նշանակութեանց դէմ, միայն թէ այդ իմաստները փոխուած չ'ըլլան, և քաղաքակրթութեամբ՝ կեղծ ծաւորութիւն, յառաջդիմութեամբ՝ խաբեալ յութիւն, բարոյականով՝ լիտութիւն և վայրենութեամբ՝ շատ անգամ՝ տգիտութիւն և միամտութիւն չը հասկցուի :

Հեռու՛ մեզմէ այն եղրակայութիւնը թէ՛ մարդկութեան նուիրական սահմաններուն մէջ մնալու համար պէտք է մէկգի ձգել այն բազմատեսակ միջոցները, որոնք կը ծառայեն մըտածմանց փոխանակութեան : Կը փափագինք միայն նշանակել սա կէտը թէ՛ նկատելով մարդկային ընկերութեան այժմայ ցաւալի գրութիւնը, ե՛նկատելով որ այն հրատարակութիւնք որոնց պաշտօնն է լաւագոյն ուղի մը ցոյց տալ մոլորեալ աշխարհիս, ընդհակառակն զայն աւելի կը մղեն դէպ անեղանելի վիհը, որուն յատակը պիտի փչրուին ամեն ինչ որ յատկութիւն ունէր ի վեր հանելու մարդու գերակայութիւնը երկրիս վրայ. նկատելով այս և ուրիշ կէտերը, որոնց

վրայ խօսելու ժամանակը չէ՛, կ'ըսենք թէ՛ ազգի մը զարգացման աստիճանաշարը չ'կրնար ըլլալ այլ ևս հրատարակութեանց աւելի կամ նուազ քանակութիւնը : Մենք քանակին կը գերազանցեմք որակը :

Արդարեւ, երբ՝ օրինակի համար՝ մի որեւէ ազգի հարիւր թերթերէն միայն երկու կամ երեք հատը՝ իրենց կէտ նպատակի ընեն մարդկային ճշմարիտ բարեբաստութիւնը, մինչդեռ մնացեալները լոկ շողմելու, քծնելու, կիրքերը զրգուելու, ատելութեան որոմ՝ ցանելու, այս ինչին դեղահատերը կամ օսկեհանքերը գրուատելու, և ուրիշ հաղար ու մէկ անպէտ և մանուանդ վտասակար գրութեանց նուիրեն իրենց սիւնակները, անկեղծ ընթերցող մը ի՞նչպէս կրնայ մտաւորական ու բարոյական զարգացման վկայագիր մը տալ այն ազգին, որ կը հաճի դրամ և ժամանակ չապրել այդպիսի անձահ և անորակելի գրոյներուն ՚ի նպատակ :

Մենք ժամանակին քաջութիւնն ունեցանք մեր կարծիքը յայտնելու «Արշալոյսի» էջերուն մէջ, լրագրութեան գերին վրայ, մանաւանդ այն լրագիրներուն, որոնք սահմանուած են ամեն անհատի : Անոնք պէտք է ըլլան կրթիչ, բարեկարգիչ, կազմուիչ, ճշմարտին ու բարւոյն բարեկամ, զեղծումներու, խաբեալութեանց անողոք և անշահախնդիր հալածիչ :

Ինչպէս կը տեսնուի, վստահ է այդ պաշտօնը, և՛ ինչ որ յոռեգոյն է, դժուարակատար, բայց ոչ երբէք անկարելի :

Այն ազգը որ կը հաճի սնուցանել — շատ չ'ըսենք — միայն երկոտասանեակ մը թերթեր որոնք անաչաւօրէն կը կատարեն իրենց պաշտօնը, ա՛լ իրաւունք կ'ունենայ ինքզինք նկատել յառաջագէմ ու զարգացած :

Նորածին «Նոր Օր»ին ծրագրերը գրեթէ կէտ առ կէտ կը համապատասխանէ դիտակից հանրութեան ակնկալութեանը. հետևաբար, յաջողութիւն և երկայն կեանք կը մտղթենք այդ մանկան : Եգիպտոսեան ազգայնոց համար ուրախութեան աւելի մ'է այդպիսի ծրագրի մ'ընթերցումը՝ թերթի մը ճակատար : Մ'չ նուազ ուրախաւթ պէտք է ըլլայ նաև վերերևումը «Արշալոյսի», «Նոր Օր»ի այդ անդրանակին, որուն այլ ևս անընդհատ շարունակուիլը փափագելի է անկեղծօրէն :

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱԶԻ ՄՈՒԽԹԱՐ ԲԱԾԱՆ

« Ալ Մուգաթթամ » տեղային թերթը, Ղազի Մուխթար բաշային Եգիպտոսէն մեկնելուն առթիւ կըռէ թէ՛ կայսերական բարձր քննիչը՝ 20 էջերէ բաղկացեալ տեղեկագիր մը զրկած է Բ. Դրան : Մեր յարգելի պաշտօնակիցը կ'ամիփոխէ այդ տեղեկագիրը, բնականաբար իր պատասխանատուութեան տակ, քանի մը տողերու մէջ, որոնց ճշտութիւնն ստուգելու որ և է միջոց մը չ'կայ հիմայ :

Ըստ « Ալ Մուգաթթամ » ի, Ղազին իր տեղեկագիրը կ'սկսի յիշեցնելով թէ ինք 40 տարի ծառայած է կայսրութեան, քաղաքական կեանքի և պատերազմի ասպարէզներու մէջ, իր կուրծքը տալով թշնամիի գնդակներուն դէմ, կայսրութիւնն ու հայրենիքը պաշտպանելու համար : Խղճի պարտականութիւն մը կատարելու համար կեանքիս վերջին օրերուն մէջ, կըռէ Ղազին, կը ներկայեմ այս տեղեկագիրը Ձեր վեհափառութեան :

Մուխթար բաշա — միշտ ըստ « Ալ Մուգաթթամ » — իր տեղեկագրին մէջ կ'ըսէ թէ՛ ամեն մարդ համաձայն է ընդունելու որ թուրք կայսրութիւնը դէպ ՚ի կործանում կը գահաւիթէ :

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Անհամաձայնությունը պատճառներուն մէջ է լոկ:

Ոմանք կը սնդեն թէ՛ բոլոր չարիքին պատճառը նոյն ինք Սուլթանն է. ուրիշները՝ (բոլոր պատասխանատուութիւնը կը նստեն նախարարներուն ու պաշտօնեաներուն վրայ):

Սուլթանը բաշա կ'առաջարկէ շարք մը բարենորոգումներ, զոր ինք ուզած է 10 տարի առաջ մտցնել կայսրութեան մէջ, և որոնք կը կարծէ թէ՛ բաւական են պահպանելու թուրքիոյ ապագան, անկախութիւնն ու մեծութիւնը:

«Այլ Սուլթանութեամբ» այսպէս կ'ամփոփէ Ղազիին ներկայած բարենորոգումները:

1. Ստեղծել Առաջանի Խորհուրդ մը, որն նստու համար կայսրութեան ու ժողովրդին գործերը:
2. Գատարաններու կատարեալ անկախութիւն:
3. Մամուլի ազատութիւն:
4. Առաջանի Խորհուրդին վճիռներովը կարգադրել երկրակալ խնդիրները:
5. Նախարարաց Խորհուրդին որոշումներուն անվիճելիութիւնը:
6. Նախարարներու Խորհուրդը կազմել ձեռնահաս և ուղղամտ պաշտօնատարներէ:
7. Հիմնական օսման դեպքերէն նուազ բարձրատիճանի դիւանագիտական գործակալներ կարգել արտասահման. նախ խնայողութեան համար, երկրորդ, սրպէս զի միւս եւրոպական տէրութիւններն ալ նոյնն ընեն թուրքիոյ մէջ:
8. Փոփոխում և վերանորոգում օսմաննան ծովային զորութեան:
9. Ցամաքի բանակներուն վերակազմութիւնն ու սերտարիութեան վերաշինութիւնը:
10. Կայսրութեան բոլոր պաշտօններուն մէջ ընդունիլ ամեն օսման հպատակներ առանց խորութեան կրօնի, ի բայց առեալ մահմետական վաղճերը:

11. Գայտոյններուն ու վազ ֆերուն վարչութիւնը յանձնել հմուտ մահմետականներու:

Բիշինի բաշայի վերջին տեղեկագիրը կը հրատարակենք, գաղափար մը կազմելու համար ժամատարին ըրած ընթացքին վրայ:

«Մայիս 29ին վերջացող շաբթուան մէջ 10 գէպը և 3 մահ նշանակուած են ամբողջ Եգիպտոս: 9 գէպը և մահ Բոր-Սայիտէն և 1 մահ Աղեքսանդրիա հիւանդանոցէն դուրս:

Մայիս 22ին վերջացող նախընթաց շաբթուան հետ բաղադրով, պիտի դիտուի թէ՛ բաւական պահած է մահերուն թիւը, 18ի սեղ 10:

Վերջին շաբթուան տեղեկագիրէն ի վեր այցելուի Աղեքսանդրիա, Բոր-Սայիտ և Գամիէզ և վերահասու եղաւ որ առողջապահական միջոցները գոհացուցիչ կերպով ի գործ դրուած էին Ուրախութեամբ կ'աւետեմ նաև թէ՛ բնակիչներն երբէք զիմադրութիւն չ'ըրին առողջապահական իշխանութեան դէմ:

Մէնմալէի լճին կղերքը խիտ հսկողութեան գնելու ու պահպանելու համար, հարկ գիտուեցաւ աւելցնել բժշկական ու հակահիւսման մարմինը շատ մը քաղաքներու մէջ:

Ախաին երեւումէն մինչև 29 Մայիս, 50 գէպը ու 23 մահ պատահած են, այսինքն 46 0/0 մահ: Սակայն եթէ զեղևներ 14 մահերը, հիւանդանոցէ դուրս, գարմախառններուն մահը կ'իջնէր 25 0/0ի»:

Եթէ այս տեղեկագիրը ընդունինք իբրև պատգամ, կ'արժէ ըսել թէ՛ աւելորդ է ընդունիլ ժամատարի գոյութիւնը Եգիպտոսի պէս 9 միլիոն բնակիչներով երկրի մը մէջ:

—Ուսմէլի երկաթուղիներուն վերջին վիճակահանութեան առաջին պարզեւը շահած է 1,254,531 թիւը կրող արժեւորումը, ի բայց առեալ հեռագրական սխալը՝ Բաղդադի որին աչքը լո՛յս . . .

—Գահիրէի մէջ սկսած է հրատարակուիլ նոր ալբանական թերթ մը, «Միւրշիտ», թուրքերէն ու ֆրանսաստառ ալբաներէն լեզուով: Ալբանացիներուն պատմութիւնը ֆրանսերէն լեզուով, բաւական շահական կտոր մ'է:

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐ

Թրքո-ամերիկեան միջադէպը հայկական ջարդերուն առթիւ, ծանրակիւն կերպարանք մ'առած է. ամերիկեան զբաւաւոր մը Միշերկրակալի ջուրերը կ'սպասէ, թուրքիոյ ծովկերպներն երթալու համար:

ԼՈՒՏՐՈՒ 29 ՄԱՅԻՍ. — Բրիտանական զունդերը 28 ին զբաւեցին Չիլըսոսը, Ռարիշ ոյժեր կը յառաջանան Լիքթէնպուրի վրայ:

ԴԻՅԵՆ-ՁԻՆ 29 ՄԱՅԻՍ. — Շոգեկառքի երթեւեկութիւնը վեր սկսած է Դիլի-Ձինէն ի Բէքին 30 ձափոցները Ասալօօֆան զբաւաւորէն դուրս ելած են ցամաքը:

Նիւ-Եորք Հեքսյոս հետեւեալ հեռագիրն ընդունած է, «Երկու օր վիճարանութենէ հետք, Բրուկէր և Սթէյն նախագահները, Թրանսվալի և Օրանժի բոլոր գլխաւոր պաշտօնատարներն ու զօրապետները որոշեցին չը դադարեցնել պատերազմը, մինչև որ կ'ընդլայն չ'հասնի հաշտութեան նպատակը պայմաններ չ'ընդհանրուին: Բրուկէր և Սթէյն նախագահներն երկուքն ալ վճռած են կողմուր բայց Թրանսվալի բազմաթիւ պաշտօնատարներ հաշտութեան և առանց պայմանի անձնատուր ըլլալու կողմնակից են:

Չիլիոյ զօնախումբ մինչև երբ պետի շարունակեն այսպէս բաւական մեծ կակ թուով կողմուր:

Հանքերու քանդումը կրնայ առաջ գալ աւելի ժողովրդին քան թէ կառավարութեան ձեռքով:

Քիչ հաւանական է թէ Բրէթօրիա պաշտպանուի Տիկին Ռիձ և իր ընտանիքը մեկնեցան Շատ մը պաշտօնատարներու ընտանիքներ կը թողուն երկրորդ իմ կարծիքով, պատերազմը երկու ամիսէն կը վերջանայ»:

ԼՈՐԵՆՁՕ—ՄԱՐԿԷՉ. 30 ՄԱՅԻՍ.— Բոլոր Փորթուկալի զօրագնդերն հրաման ստացան պատրաստ գտնուելու սահմանագլուխ երթալու: Փորթուկալի մարտահաւերը հոս կը կեդրոնանան: Տէլաօսայի երկաթուղով ապրանքի փոխադրութիւնը գաղթած է: Պօէրհրամանատար մ'եկած է Գոմատի Բուրի:

ԲՐԷՅՈՐԻՍ 30 ՄԱՅԻՍ. — Բրիտանական սպաները Հօաննէսպուրիկ անձնատուրութեան պայմաններուն վրայ խօսելու համար, արդէն գլխաւոր զօրախումբի յառաջապահ զունդը ձեռնիտարնի և Բրէթօրիայի մէջ տեղ կէս ճամբան է, նախագահ Բրուկէր Ուաղըրուալլօվըն գացած է:

ԼՈՒՏՐՈՒ 30 ՄԱՅԻՍ.— Տէյլի Մէյլ Բրէթօրիայէն հեռագիր մ'առած է որուն նախընթաց քաղաքը՝ առանց ընդդիմութեան 2 ժամուան մէջ անձնատուր եղած է կղերկառավարին արտօնեալ է ներս ընդունելու Անգլիացիները:

ՊԵՏՐՈՒՆՆԵՆ 30 ՄԱՅԻՍ.— Կցման յայտարարութիւնը կարգադրուեցաւ հոս: Օրանժի Ազաա Պետութիւնը պիտի կոչուի այսուհետեւ Օրանժ գետին Գաղթականութիւնը:

ԼՈՒՏՐՈՒ 31 ՄԱՅԻՍ. — Լորա Բօպէրքս ժամը 2ին (կ. ե.) կը հեռագրէ Հօաննէսպուրիկէ. «Մեր գունդերը զբաւեցին քաղաքը. բրիտանական զօրակը կը ծածանի կառավարութեան պալատին վրայ: Սպաննուած հարիւրապետ Միլիթ և տեղակալ Յայֆ: Չօրապար Հուայթ յուլիս 5ին պիտի մեկնի ձեպարաղբար, իր հրամանատարութիւնը նորէն ձեռք առնելու:

ՆԻՒ-ԵՕՐԳ 31 ՄԱՅԻՍ.— Պօէր պատուիրակները կը յայտարարեն թէ՛ վաղուց արդէն վճռուած է Բրէթօրիայի թողուլը, Անգլիացիները Թրանսվալի սիբոթը բերել ձգելու համար:

ԴԻՅԵՆ-ՁԻՆ 30 ՄԱՅԻՍ.— 350 եւրոպական զօրքեր 5 թիւղանօթով մեկնեցան Բէքին: (ՀԱՎԱՍ)

ԴԻՅԵՆ-ՁԻՆ 30 ՄԱՅԻՍ.— Բրիտանական, ամերիկեան, իտալական, ճաբոնական, ֆրանսական և ռուսական զունդերն այսօր կէս օրէ հետք երկաթուղիով մեկնեցան Բէքին: Ամինքն ունին 22 սպայ 334 մարդերով և 5 արագածիք թիւղանօթով: Կը տարաձայնուի թէ՛ Բէքին Ա. դրան առջև. զիմադրութեան պիտի հանդիպին:

ԴԻՅԵՆ-ՁԻՆ. — Չինացիք չեն թողուր որ ռուս զունդերը Թաբուի բերդերէն անդին անցնին: (ՌԻՒԹԷՐ)

ԲԷՔԻՆ 30 ՄԱՅԻՍ.— Կացութիւնը թիչ մը բարելաւեցաւ: Չինական զունդերը զբաւեցին բոլոր կէտերն ուր խռովութիւններ պայթած էին:

Կ. ՊՈՒԼԻՍ 31 ՄԱՅԻՍ.— Բօզօնիջօ իշխանը ներկայ գտնուեցաւ երկուք-Բէքին մէջ հացկերպի մը ինք ընդունեց Արամանդակու օսմանից, իսկ իւսաբուրա իշխանը՝ Մէճիսիցէի շարունակները: Իշխանները Վիլնա պիտի երթան:

ԼՈՒՏՐՈՒ 1 ՅՈՒՆԻՍ. — «Տէյլի Մէյլ» կ'իմանայ Լօրէնձօ-Մարքէզէ 30 Մայիս թուականով թէ՛ Թրանսվալի մայրաքաղաքը՝ Միտալը պուրկ փոխադրուեցաւ: Բրէթօրիա-Հօաննէսպուրիկ կէս ճամբուն մէջ, Բաալ-Փոնդիլի քով ընդհարումներ տեղի ունեցան:

ՊԵՐԼԻՆ 1 ՅՈՒՆԻՍ. — Վիլհելմ կայսրը՝ ջերմագին խնդակցութեան հետագիր մ'ուղղած է Վիլթորիա թագուհիին Լորա Բօպէրքսի տարած յաղթանակին համար: (ՌԻՒԹԷՐ)

ԼՈՒՏՐՈՒ 1 ՅՈՒՆԻՍ. — Լոնտոն քաղաքին քաղաքապետական Խորհուրդը՝ որոշեց ուղերձ մը ղրկել Նորին Բարձրութեան Ստիվին և զայն հրաւիրել ի կից չօլ:

ԼՈՒՏՐՈՒ 1 ՅՈՒՆԻՍ. — Բրէթօրիայէն Անի Եօթք Հէրալտի քաջուած հեռագրէ մը կ'իմանանք որ այդ քաղաքին վրայ գացող անգլիական զունդերն ետ մղուած են:

Կախար կը շարունակէ: Նախագահ Բրուկէր մեկնեցաւ. մտադիր է պատերազմը մինչև ծայրը մղելու:

ԵԳԻՊՏԱՅԱՅՈՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վերջին գաղթային հոտոնքէն ի վեր, Եգիպտոսի մէջ ուրախալի երեւոյթ մը կը տեսնուի, նորեկ գաղթականութեան վրայ. նոր կենդանութիւն մ'սկսած է առաստարակ: Իրաւ է որ բաւական տարիներ առաջ կազմուած են հոս ընկերութիւններ, Բարեգործական, Յաւազդիւստեք, Ընթերցասիրաց, միլիտանտաւ եւ այլն անուններով, բայց այսօր այդ ընկերութեանց մէջէն միայն Բարեգործականը կը մնայ կանգուն, և Աղքատարարը, որ, ուրախ ենք խոստովանելու, իր նորոգ կազմակերպութեան շնորհիւ սկսած է արդէն ցոյց ապ հոսանքի և գործունէութեան ապացոյցներ, ու յաջողութեան երաշխաւոր նշաններ:

Սակայն, մեր նպատակէն դուրս է, գէթ առ այժմ զբաղիլ մանրամասնութիւններով:

Մեր ցաւակցութիւնը յայտնելէ հետք՝ ատենով ապրած ու հիմա անհետացած ընկերութիւններուն համար, կուզանք հակիրճ տեսութեամբ մը պարզել արդէ ընկերութեանց վիճակը:

Յայտնի է թէ՛ իր հնութեամբը յարգելի է Բարեգործական ընկերութիւնը, որ իր գոյութիւնն ու յարատեւութիւնը կը պարտի ընդարձակ Սրճարանի մը, որ թէ՛ և կը կրէ հայկական անունը, բայց համազգային յաճախորդներով ալ յաջողած է ապահովել իր ելմտականը, բարեգործական կը կոչուի, որովհետեւ իր եկամուտներէն 25 0/0ը կը յատկացնէ կրթականին ու մարդասիրականին:

Ընթերցասիրաց ընկերութիւնը, — որ իր զբօսարանն ու ընթերցաստունը փակեց զժողովրդար անցեալ տարի, և որուն գոյքերը փոշեթափաւ կ'սպասան հիմա տեղուս Առաջնորդարանի մէկ անկիւնը — քանի որ տարիներ յաջողած է ընթանալ իր ծրագրով, որուն ինչ ինչ յօդուածներուն վրայ չենք գիտեր ի՞նչ պատճառներով, վերջէն կատարուած անհարկի փոփոխութիւնները կորստաբեր հարուածը տուած են այդքան կարեւոր ու օգտակար հաստատութեան մը, որ կոչուած էր փայլուն ապագայի մը, ժողովրդի մտաւորական յառաջդիմութեան տեսակէտով:

Դասակարգերու թիւը ըմբռնումները, կանխակալ կարծիքները, միանալով փորձառութենէ զուրկ վարիչներու ընթացքին, ո՛չ նուազ աղիտարեր եղած են ընկերութեան. հոս, ինքնին կուգայ կը ներկայանայ հարց մը, շահեկան ու կենսական. ժողովուրդը կրթելու և առաջնորդելու պաշտօնն ստանձնող անձերէն ո՞րպիսի հանգամանք կը պահանջուի. քիչ շատ ուսեալ, բայց ընկերային կեանքէ անջատ, և անփո՞րձ երիտասարդներ թէ՛ զբասեղաններու առջև թէ՛ և չ'ապրած, սակայն ընկերային ամեն խաւերը թախանցած ու կենսաբի բովէն անցած մարդիկ պէտք է որ վարեն մեր ազգային ընկերութիւնները, ուր անխուսափելի են կիրքերը, նկատումները, կասկածները, ներքին դիտումները, վերջապէս մեր ցեղին մէջ մուտ գտած բոլոր թերութիւններն ու խեղճութիւնները: Այս հարցը մեր յառաջիկայ թիւերուն մէջ պիտի յուզուի իբրև ընական կարգովը:

Անցած տարուան զարուհը ճոխ եղաւ եգիպտական յոց ազգային ու մարդասիրական շարժումներովը: Մայր-Հայրենիքէն հասած աղեկտուր աղաղակները սոսկալուծուած, որբերուն ու այրիներուն՝ արձագանգ գտան հոս, ամեն սրտերու մէջ. անմիջապէս շարժումն սկսաւ. երիտասարդութիւնը մէկ սիրտ, մէկ միտք, խանդավառ գործունէութեան մէջ մտաւ. հանդանակութիւններն առաջ տարուեցան եւանդագին. բաւական պատկանելի գումարներ գտաւ եւան տեղուս պարարտ յսակներէն. ժողովուրդը, գործաւոր, արհեստաւոր, վաճառական ու պաշտօնեալ, անխափ ձեռք կարկանդակներ օգնութեան Սակայն քիչ յետոյ զգալի եղաւ անբաւականութիւնը հանգամանակութեան եղանակով օգնելու. պէտքը շնչուեցաւ նորանոր որբախնամ ընկերութիւններ հիմնելու:

